

616.9
12 - 15

30 JUN 2010

Հ.Ս.Խ.Հ.
ՌԺՈՂԿՈՄ Ա.Տ

№ 5 ԱՐԵ-ԼՈՒ ԴՐԵԳԵՐԵՐԸ № 5

Բժ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՆՉ Ե ԱՐԵԼ ԳԻՏՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵ-
ՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2-րդ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

616.9
2-15

9. ՊԵՏՅԱՆ • 31

— ՅԵՐԵՎԱՆ —

016.9

2-15

ՀՍԽՀ ԱՐԺՈՂԿԱՆՄՅԱ

Ա 5 ՍԱՆ-ԼՈՒՍՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա 5

616-002

ԲԺ. Ա. ՂԵԶԱՐՅԱՆ



Ի՞նչ ե ԱՐԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՐԱԿԻՉ ՅԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՁԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԴՈՂԿՈՒՄՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1981

18.06.2013

7068

ԱՐԵՎԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱԾԱՌՈՒՄ

Դեռ շատ հնուց հայտնի յեն վարակիչ հի-
վանդությունները:

Նրանցից շատերը՝ ժամանակակից, խորհրդան,
թոքոխտը և ծաղիկը շատ մեծ զոհեր են տա-
րել և յերկար ժամանակ մարդկության սարսա-
փի մեջ պահել:

Խոչոր համաճարակների ժամանակ մեր
նախնիքները կռվի իրական միջոց չեն ունեցել,
քան թողնել հիվանդներին անխնամ և սարսա-
փահար փախչել քաղաքներից ու գյուղերից
յեռներն ու հեռավոր վայրեր:

Հին դարերում ամենամեծ ավերիչները
յեղել են ժամանախտը և խոլերն:

14-րդ դարում ժամանախտը Յեփրոպայում
և Ասիայում տարել է մի քանի տասնյակ միլի-
ոն զոհեր: Նա հնձել է այն ժամանակվա ազդա-
րնակչության կիուց ավելին և հայտնի յե-
ղել «սե մահ» անունով:

Վերջին հարյուր տարվա ընթացքում խո-
յարան թուռուտանում յերեք միլիոն մահացու-
թյուն և պատճառել:

Վոչ պակաս առատ հունձ և ունեցել բնա-
կան ծաղիկը մինչև 19-րդ դարը:

Բոլոր այն վայրերում, որ հայտնի է ե-
ծաղիկ հիվանդությունը և որ անծանոթ են յե-
ղել նրա զեմն առնելու միջոցներին, առաս
հունձ և ունեցել յերեխաների մեջ:

Մինչև այսօր ել Արեվելում խուլ վայրեր
կան, որ ծաղիկը մաքայլվան զոհեր և տա-

ՊԵՏՈՒԹՅԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 20
ԳՐԱԴԵՎՈՐԴԼԻՆԳ. 2171 (Բ)
ՏԵՐԱԺ 4000



41791.68 1583-63

նում, չնայած վոր նրա դեմն առնելու միջոցն
արդեն շատունց և գտնվել և զործադրվում է
լուսավոր յերկրներում:

Դա ծաղկի շինուկի պարտադիր պատվաս-
տումն է:

Բժագոր և վորովայնի տիֆը մինչև որս
ել խոշոր զոհեր են տանում հետամնաց-յերկըր-
ներում, այսինչ Արևմտյան Յեղուազան տպատ
և այդ հիմանդություններից:

Հասարակական մեծ չարիքների չարքին են
պատկանում՝ մալարիան, թոքախտը և սիֆի-
լիսը:

Մալարիան այսոր ել խոշոր ավերումներ ե
կատարում շատ յերկրներում, ինչպես և մեզ
մոտ՝ Կովկասում ու, Թուրքեստանում, չնա-
յած, վոր պրոֆիլակտիկան ու բուժողնությու-
նը որ ավոր ուժեղանում ու կատարելության
են հասցնում իրենց պայքարի զենքերը:

Մալարիան իր մտասայական զոհերը տա-
նում ե, մանավանդ, հարավային տաք յեր-
կըրներում, ուր ազդաբնակչության մեծ զանգ-
վածներն ապրում են ճահճոտ վայրերում և
զործ ունեն բրնձի և այլ հողագործական մշա-
կույթների հետ:

Թոքախտն այսոր իրավամբ պրոլետարիա-
տի չարիք և համարվում, վորովհետեւ նա զործ
ունի առավելասպես հյուծված, անապահով և
ներքնարկերում ու խյուղերում ապրող
զանգվածների հետ:

Իսկ սիֆիլիսը կապված է անկուլտուրա-
կան ու սնուտիտապաշտ ժողովութերների հետ և

առարածված և այն յերկրներում, ուր մեծ ծա-
վալում ունի նուև ալիունոլիգմը:

Այսոր ել կան բազմաթիվ վարակիչ հի-
վանդություններ, վորոնք քիչ վնաս չեն հաց-
նում մարդկության, բայց նրանք այլես ա-
ռաջվա ավերիչ բնույթը չունեն:

Ներկայում շատ վարակիչ հիվանդու-
թյուններ համարյա թե վերացել են Արևմտյան
Յեղուազայում. որինակ՝ ծաղիկը, բծավոր ու
վորովայնի տիֆը, իսկ շատ հիվանդություն-
ներ ել թուլացել են, ինչպես թոքախտը Նոր-
Ջելանդիայում, Նորվեգիայում և Շվեցիայում:

Ի՞նչով բացատրել այդ ամենը. ի՞նչու այլես
մեր նախնիքների նման համաճարակների ժա-
մանակ սարսափահար չենք թողնում մեր հի-
վանդներին անողնական ու մեր բնակավայրե-
րից չվում լիները: Կամ թե ձեռքներս ծալում
և ապավինում «աստծու և սրբերի ամենակա-
րողության»:

Եսու պարզ ե:

Այսոր մենիք գիտենք վարակիչ հիվանդու-
թյունների տարածման պատճառները. նրանց
հատկությունները յեվ նրանցից շատերի գեմ
կովելու միջոցները, վորոնց վրա մեկ դար աշ-
խատանք են բափել լավագույն գիտնական-
ները:

Այս գիտնականներից շատերը զոհ են գնա-
ցել համաճարակների դեմք առնելու աշխա-
տանքների ժամանակ:

Վարակիչ հիվանդությունների, հատկա-
պես ժանրեների ուսումնաօիրության գործում.

Վրանսացի մեծ գիտնական Պատուրն իրավամբ համարվում է հայր:

Նա յեր առաջինը, վոր հաստատեց, թե միկրոբները կամ մանրեները պատահական գոյություններ չեն, այլ վոր նրանք, թե բնության և թե, մանավանդ, հիմունքությունների մեջ, խաղում են շատ կարևոր դեր:

Նույն կարծիքին և հանդել միաժամանակ նաև մի այլ խոշոր գիտնական՝ զերծանացի մորերտ Կոլիսը:

Պատուրն ու Կոլիսը համարվում են մանրեցրանական ուսումնական հիմնադիրներ:

Այսուհետեւ նրանց աշուկերտներն աշխատել են այդ ուսմունքն ել ամենի խորացնել ու նրա ըջանակները լայացնել:

Մանրեների կյանքն ուսումնասիրելով՝ Պատուրը հանգեց այն յեզրակացության, վոր մանրեները գտնվում են բնության մեջ ամեն տեղ և առաջանում են նման մանրեներից:

Ասել և թե՝ կյանքի մեջ չկան աննպահակ ծնունդներ, այլ վոր՝ «ամեն կենդանի գոյությունն առաջանում է իր նման կենդանի գոյությունից»:

Նման յենթագրությունը գիտության հիմք դարձավ և խոշոր դեր խաղաց վարակիչ հիմնդությունների յուսարանության դորժում:

Մանրեների ուսումնասիրության մեջ կարեղ դեր ե խաղացել միկրոսկոպը, ուսանց վարի անհնար եր մանրեները տարբերել իրարից, և վորոշել նրանց տեսակները:

Մինչ Պատուրը, բագուկանաչափ զարգա-

ցած են յեղել բնագիտության յերկու ծրագիր՝ Փիլիկեան ու քիմիան:

Դեռ ևս 17-րդ դարուց գոյություն ունեմին ակնաբուժական պարագաներ, մեծացնող ապակիններ և միկրոսկոպ։ Սակայն ժամանակի գիտնականները թեև միկրոսկոպի տակ տեսնում ենին մանրեները, բայց զարգացար չունեմին նրա քայլացիչ դերի մասին։

Հիմք ընդունելով այն ճշմարտությունը, թե մանրեները ծնվում են իրենց նմաններից և զարգանում են ամեն տեղ, բնականորեն գիտնականները հանգել են այն յեզրակացության, թե՝ վոչնչացնելով մանրեները՝ կարելի յե վերջ տալ նու նրանց գլուքայն և հետագա զարգացմանը։ Նման տեսությունն առաջ բերելով ամբողջ մի շարժում վարակիչ հիմնդությունների դեմ վարելիք պայքարում։ Գիտությունը մշակել սկսեց միկրոբների վոչնչացման բազմաթիվ մեթոդներ։

Գիտուկան բազմաթիվ տվյալներով հաստատված ե նաև այն փաստը, վոր մանրեներն ապրում են վոչ միայն հիմնդություններում, այս նրանց կրում են առողջ մարդիկ, վարոնք հիմնդությունից կամ նոր են առողջ մարդ հիմնդությունից կամ մեջ են յեղել հիմնդությունների տակ։ Այդպիսի մարդիկ մանրեներ կրողներ են և, հետեւապես, հանդիսանում են վարակիչ հիմնդությունների տարածողները։

Մանրեները գտնվում են նաև ողի, ջրի, չողի մեջ, ընակարաններում, հաղուստներում և սննդամթերքներում։

Այսուհետեւ գիտնականները պարզեւ են

մանրեների ազդեցությունը կենդանի որգանիզմների վրա, ուսումնաբիրել են մանրեների արտագրած թույնը՝ տոկսինները, վորոնցով նրանք թուեավորում են կենդանի գոյություններ :

Այսուհետեւ մանրեաբանությունն այնքան է խորացել, վոր գիտնականները մանրեների վոչընչացման համար դիմել են վոռչ միայն արտաքին միջոցների՝ դեպինֆեկցիայի, այլև զտել են, վոր ամեն կենդանի որգանիզմ իր մեջ ունի ինֆեսապաշտպանության մի զարմանալի զարություն՝ կավել իրեն ուսար նյութերի դեմ, վորոնց մեջ՝ նուև մանրեների:

Հիմնավորվ մեր որգանիզմի ինքնապաշտպանության այդ հզոր միջոցի վրա՝ գիտնականներն այն դարձրին ժարակիչ հիմնավորությունների դեմ պայքարի հարեւոր միջոց։ Գիտության ովյալներով զինված, նրանք աշխատեցին ուժեղացնել մեր որգանիզմի այդ բնածին մեծ հատկությունը։

Մարդկային ինքնապաշտպանության աշխատանքների զարդանիքի խոչոր պարզաբանովը յեղել ե ուսումնական Մեջնիկովը, վորը չկարողանալով տանել ցարական ոեժիմը, Ռուսաստանից հեռացավ Փարփակ, ու Պաստորի անդան ինստիտուտում կատարել ե իր աշխատանքների մեծագույն մասը։

Մեջնիկովը մարդու որգանիզմի մեջ զտել է հակամաճրեական նյութ, վորը լուծելով մանրեներին, նրանց թույնը դարձնում է տնուժ։

Անտիօկիսիների հրաշայի գյոււտն այսոր

վայրակիչ հիմնավորությունների դեմ մզվող պայքարի կարեւոր գործունեւ է հանդիսանում։

Ըստ Մեջնիկովի ովյալների, պարզվում է, վոր կենդանի որգանիզմն ոժտված է բջիջների մեծ քանակով, հատկապես տեղափորված արյան և ներքին գործարաններում, վորոնք ընդունակ են միանալ մանրեներին և կլանել նրանց։ Դա Մեջնիկովի Փազցիտների հայտնի տեսությունն է։

Հենցնլով կենդանի որգանիզմի այդ առանձնահատկության վրա, գիտնականներն սկսել են արհեստական միջոցներով ուժեղացնել մարդու որգանիզմը հակամիկրոբային նյութերով, այլև բազմացնել մեր որգանիզմի Փազցիտները, այսպես կոչված նախազգուշական ներքարկումներով։

Հակամիկրոբային նյութերը, վորոնք ստացվում են կենդանիների արյունից, գործածվել սկսեցին վորպես բուժիչ միջոցներ, ինչպես որինակ՝ հակամիկրոբիտային չեռուկը։

Բայց վոր կարեւորն է, միաժամանակ սկսեցին ուսումնաբիրել այն պատճառները, վորոնք մի կողմից՝ մարդուն դարձնում են գիտացկուն հիմնավորությունների հանդեպ, իսկ մյուս կողմից՝ արտաքին պայմանները, վորոնք չեն նպաստում մանրեների զարգացման։ Այսպիս վոր, ակնհայտնի զարձրին այն վճռական զերը, վոր հիմնավորությունների տարածում մեջ խաղում են՝ թույլ որգանիզմը, անբարար սնունդը, ցուրտը, բնակարանային վատ պայմանները, աղոտու չուրը և հողը։

Այսպիսով շատ բաներ, վոր մեր նախնիք-
ները չդիտելին և զաղանիք ելին նրանց հա-
մար, այժմ պարզել և գիտությունը և մենք
գյուղությամբ գործադրում ենք համաձարաւե-
ների զեմ և պաշտպանվում:

Դործնական մեծ նշտանկություն ստացան
զանազան Հայոնարիերությունները գարակի՛տ
հիմանդրությունների ընազափառում: Այդ գյու-
ները բաւժողնությանը տվին այնպիսի հզոր
ուշ հիմանդրություններ գործադրությամբ վե-
համ թե իսպատ բուժվում:

Վաղուց հայոնի յե, որինակ, վոր մալա-
րիան իր մեծ ավերումներն անում և տաք ու
խոնավ յերկրներում: Նում մալարիան կա-
պում ելին հոգի գորոշիացման հետ և պատ-
ճառը համարում միավոները:

Յերկար ժամանակ մարդկությունն անուժ-
եր մալարիայի ավերումների զեմ առնելու: Ըն-
դումնենը հիսուն տարի առաջ էր, վոր Փրան-
սացի գիտնական Լավերանը, մալարիայով
հիմանդրաց մարդու արյան վրա կատարած իր հե-
տազոտությունների ժամանակ, միկրոսկոպով
Հայոնարիերեց մալարիայի միկրորը. իսկ հե-
տադաշտում, նույն միկրորը դանդեց նաև ժա-
մակի որվանիզմում: Այժմ միայն գիտենք,
վոր առաջ մարդը մալարիայով հիմանդրում
է միմիայն ժուտակի միջոցով:

Մալարիայով հիմանդրաց վարակում է
մոծակին, իսկ վերջինս՝ առողջ մարդուն:

Այս գյուտն արգյունք է յերկար տարինե-
րի անխօնչ աշխատանքների, յերբ գիտնական-

ները փորձեր ելին անում իրենց և իրենց մեր-
ձաւուրների վրա:

Այդ գյուտից հետո յե, վոր մեզ համար
պարզվում է, թե ինչու խոնավ և տաք յերկրը-
ներում մալարիան առեղջ է, վորովհետեւ խո-
նավ տեղեր են չինում իրենց բները, այսուհե-
տեւ բազմանում մեծ թվով ժուտակներ, վորոնք
մալարիայի տարածողներն են:

Այստեղից հետեւում են պայքարի նորանոր
ձեեր, վորոնք ուղղված են թե մալարիայի հի-
մանդրության զեմ և և թե առաջադրում են մի
շաբք միջոցներ, վորոնցով կարելի յե վոչնչաց-
նել ժուտակները և պաշտպանել մարդուն նրանց
խոծից:

Անգամ մեր փոքրիկ յերկրի ուսանելի փոր-
ձը ցույց է տալիս, վոր հետեւողական ու պե-
տության ընձեւած պայքարի նորագույն ձեե-
րով կարելի յե մալարիան թուլացնել և դրա-
կան հետեւանդների հասնել:

Արարատյան դաշտավայրի շատ գյուղեր,
վորոնք յերկար ժամանակ տառապում ելին
մալարիայի ձեռքին և անտեսական ու Փիզիքո-
կան մեծ կարուստներ ունենում, վերջին յերե-
շորս տաքիս համար պայքարից հետո, այս
քջանների աշխատավորությունը վոչ միայն
Փիզիքապես և սկսել կազմուրվել, այս և տրա-
մեսապես:

Զալթուուկի վոչնչացումով ու ճահիճների
չորացումով, ինչպես և մեր տրոպիկալ լանդշեփ
հաղթից հասցրած բաւժողնության. շնորհիվ,
մալարիայից սերհատված մեր մի շաբք գյու-
ղեր, վորոնց աղդարնակչություն աճեցողա-

թյունը կանգ եր առել, ներկայումս նորից նոր-
մալ ծննդուբերություն ունեն:

Իստիայում շատ պարզվեա ու բուօակա-
նությամբ հաջուսա քջաննմը, վորոնք մա-
լարիայի պատճառով անմարդարնուի ելին ա-
ռաջները, այսոր, գիտության ընծեռած պայ-
քարի չնորհիվ, նորից բնակելի յեն դարձել և
նորից յեռում և կյանքը:

Եերկար տարիների մտնրազննին հետազո-
տությունների արգյունք պիտի համարել խո-
թքայի վիրը իտոնի, թոքախտի բացիի, ոիֆի-
մափ սպիրոխետի և այլ մանրեների գյուտերը
և նրանցից հետևող բուժովնության նորազույն
Քիջոցները, վորոնց չնորհիվ այսոր շատ հի-
վանդություններ զգալիորեն թուլացել և կորց-
րել են իրենց սուր գարակչությունը:

Փայլուն հետեվանքներ տվին բնական ծաղ-
կի, գիֆտերիտի, սապի և ջրվախության դեմն
առնելիք ներարկման գյուտերը:

Առաջին անգամ անգլիացի Եդվարդ Զեն-
ները ցույց տվավ, վոր ծաղկի պատվաստումը
ժարգուն, աղատում և նրան բնական ծաղկի
վանդից:

Ներկայումս ծաղկի պարտադիր պատվաս-
տումն բառ Զենների, ընդունված է համարյա-
քալոր պետություններում և տալիս է փայլուն
հետեվանքներ:

Բնական ծաղկի վանդը Յեվրոպական յեր-
կաքներում այլիօ գյուտերուն չանի:

Եերեխանների մեջ ծաղկից քիչ զոհեր չեր
տանում գիֆտերիո հիվանդությունը. մինչ-
դեռ այսոր, չնորհիվ հակագիֆտերիտային գի-

ճուկի, այդ հիվանդությունն ևս անվտանգ է
դարձել:

Հակադիֆտերիտային շիճուկը միաժամա-
նակ գործ և ածվում և վորպես նախալզուշա-
կան, և վորպես բուժողնության միջոց:

Սապ և ջրվախության հիվանդություն-
ների գեմն առնելիք ներարկումների գյուտը
պատկանում է Պատորին: Այդ հիվանդու-
թյունների հակաշիճուկը մի ժամանակ պատ-
րասավում եր միայն Փարիզի Պատորի ինստի-
տուտում, իսկ այսոր պատրաստում են շատ
ուրիշ յերկրներում:

Այսոր մենք մեծ վործառություն ունենք
նաև խոլերայի և վորովայնի տիֆի գեմ վա-
րելիք պայքարի ասպարիզում: Գիտենք, թե
ինչ խոշոր գեր են կատարում այդ համաճա-
րակների տարածման գործում ջուրն ու ախ-
տոս հողը: Աւտոի մեր պայքարն ուղղելով
վերջիններիս գեմ խոշոր չափամ. Թուլացում
ենք այդ հիվանդությունները:

Այն քաղաքներն ու գյուղերը, վորոնք ու-
նեն խմելու մաքուր ջուր և կանոնավոր կոյու-
ղի, այսուղ այդ հիվանդությունները չեն
զարգանաւմ և տարածվում:

Բացի այդ, ներկայումս գիտությունը նա-
խալզուշական ներարկումներ և կատարում խո-
չերայի և վորովայնի տիֆի գեմն առնելու հա-
մար:

Ինչ վերաբերում է թոքախտին ու ոիֆի-
լիսին, մարդկության այդ խոչըրադույն ավե-
րիչներին, գիտությունը նրանց գեմ ևս պայ-
քարի մեծ հնարավորություն. և ստեղծել: Այ-
քարի մեծ հնարավորություն. և ստեղծել:

սոր մենք գիտենք, թե առավելադես ինչ պայ-
ժաններում են զարդարում ու տարածվում այդ
հիմանդրությունները, հետեւապես գյուրանում
են նրանց գեմն առնելիք կույի ձեւերը:

Թոքախտի տարածումը, ինչպես վերն ա-
ռաջինք ,մեծ կապ ունի պրոլետարքատի հետ,
փորովհետև նա սիրում է իր ցանցերը տարա-
ծել աշխատանքից հյուծվածների, սակավա-
բյունների, վատ ու անբավարար սնվողների
ընթաններում, վորոնք ապրում են մութ ու խո-
հավ բնակարաններում: Դրա համար ել աշխա-
տավորության սոցիալ-տնտեսական դրության
բարելավումը, ինչպես և աշխատանքի պայ-
ժանների դյուրացումը, տռաջնակարգ նշանա-
կություն ունի թոքախտի գեմ՝ վարելիք պայ-
քարում: Այդ ուղղությամբ ել Խորհրդային
իշխանությունը պետական միջոցներից խոշոր
դրամական հատկացումներ են անում թոքախտի
գեմ վարելիք պայքարին, հիմնում են հանելը-
տաներ, սանատորիաներ, գիսպաններ, բայց
վոր զիսավորն են, ծղտում են ինչիմումի հաց-
նել բանվորության աշխատանքի ժամերը ձանր
որդյունաբերության մեջ: Յոթ ժամ յա աշ-
խատանքը մեզ մոտ վոչ միայն լողունդ են, առ
և արդյունաբերության վորոշ ճյուղերում ար-
գեն ունի իր գործադրությունը: Մեծ ուշա-
դրություն են հատկացվում ներկայումս նոն
բանվորության բնակարանային շինարարու-
թյանը: Յեվ դա բնական են, վորովհետեւ
նոր կենցաղի խնդիրները սերտ կապ ունեն բառ
ամենային հարմար ու հեգինենիկ բնակարաննե-
րի հետ:

ՍիՓիլիսը մի կողմից հյուծում ու այրան-
գակում ե հիվանդին, իսկ մյուս կողմից քայ-
քայում ե սերունդներ: Գիտակորն հետազո-
տություններն ու ժամանակակից հասարակա-
կան պայմանների ուսումնասիրությունը գծել
են պայքարի այն հիմնական ուղին, վորը կապ-
մած ե հին հասարակական խարիսուլ ձեվերի և
կնոջ հետամնացության ու իրավադրկության
հետ:

ՍիՓիլիսի գեմ պայքարն այսոր տարվում է
այն ուղղությամբ, վոր մի կողմից հնարավոր
մինի վերացնել հին հասարակաբդի աղջատվոծ
ու այլամնակ ձեվերը և նրանց փոխարինել ա-
գելի կուլտուրական ու բարձր ձեվերով, իսկ
մյուս կողմից՝ ազատագրել կնոջն իր կապանք-
ներից և նրան զարձնել աղամարդուն հալա-
ռարագոր և գործունակ պետական ու հասար-
ակական ասպարեզներում: մի բան, վորին հասել
է խորհրդային կինը Հոկտեմբերյան Հեղափո-
խությանից հետո:

Բայց հասարակական պայքարի ձեւերից,
գիտությունը լարել ե իր ուժերը ուղաքարի
ամբելի արմատական միջոցներ զանելու թո-
քախտի ու սիֆիլիսի գեմ, վորպիսին հաջողել ե
նրան հասարակական այլ ավերիչների գեմ:

Յեթե մի հետազարձ հայացք նետենք վա-
րակիչ հիվանդությունների և նրանց անցած-
յերկար, զարերի հեռավորություն ունեցող
ձանապահների վրա, կտեսնենք, վոր վիտու-
թյունն ընթացել ե ուղիղ և հաղթական: Նա
մարդկությունն ազատել ե մեծամեծ պատու-
հասներից:

Բաւժագնությանը զուգընթաց պիտության
դժած այսորվա հախազգուշական միջոցները
վարակիչ հիմանդրությունների դեմ, բայտա-
զույն զործը պիտի համարել և պիտի աշխա-
տանք շխնայել այդ բանը սեփականություն
դարձնելու մեր աշխատավորության լայն խռո-
վերի:

Մեր բանվորությունը գեռ ևս պակաս կուլ-
տուրական և և առողջապահական գիտելիքների
մէջ քիչ գրագետ: Պիտի բարձրացնել նրա կուլ-
տուրական մակարդակը և նա կարող կլինի-
կա նոր պայքարել մարդկության ավերիչների՝
վարակիչ ախտերի դեմ:

ՀՈՉՈՒՆԳՆԵՐ

— Պայքարիք անմաքուր, խոնավ ու խա-
վաք բնակարանների գեմ, նրանք վարսեկիչ հի-
մանդությունների բներ են:

— Ուր չկա լույս, ող, և արևի ճառա-
շայթներ, այնտեղ զարդանում են վարտկի
մանրեները:

— Կեղտը, անմաքուր ջուրը, թարմ ողի
բացակայությունը, անբավարար ու վատ սը-
նունդը, — սրանք են հիվանդությունների տա-
րածման դիմայոր ազդակները:

— Վարակիչ հիվանդությունների գեղ
շաղող պայքար վարելու համար պիտի զբա-
րեալ լինել առողջապահական գիտելիքներէ



ԳԻՒԾ 7 ԿՈՂ.

Խ+2

0

135-



Д-ր Г. П. Газарян

Что сделал наука в области
заразных болезни

Госиздат ССР Армении
Эривань

1931

«Ազգային գրադարան



NL0289066

7068